

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԶՐԱՐԲԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ (ԱՅՍՈՒՀԵՏ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ) ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՅՈՒՅԹ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ 3.2-1) ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1-ին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է անշարժ գույքի կադաստրի վարմանը, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է համայնքի տարածքում գտնվող հողերի հատկացման, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու հետ կապված հարցերը: Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է համայնքի հողերի գոտիավորման ու օգտագործման սխեմայի կազմման աշխատանքներին, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է ինքնակամ հողագավթման կանխման, կասեցման և դրանց հետևանքների վերացման աշխատանքներին, աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ մասնակցում է սահմանված կարգով հողային հաշվեկշռի կազմման աշխատանքներին, տեխնիկական վերահսկողություն է իրականացնում համայնքի կողմից կազմակերպվող շինարարության որակի նկատմամբ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- առնվազն միջնակարգ կրթություն:
- իր լիազորությունների հետ կապված ՀՀ օրենքների և իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:
- տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը:
- ունի համակարգչով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012 թվականի դեկտեմբերի 4-ին ժամը 14:00-ին:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

- դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի (բացակայության դեպքում տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակի հետ միասին:
- արական սեռի անձինք՝ զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճեն իսկականի հետ միասին:

- մեկ լուսանկար 3x4 չափի .
- անձնագրի պատճեն.
- հայտարարություն այն մասին, որ նա չի տառապում 2005 թվականի մարտի 3-ի ՀՀ կառավարության թիվ 310-Ն որոշմամբ հաստատված ցանկով հիվանդություններից մեկով:

ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ներկայացնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր 10:00-16:00 բացի շաբաթ և կիրակի օրերից: Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցի տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրին և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել Ջրարբիի գյուղապետարան՝ Պ.Սևակ փողոց N 7 հասցով, ինչպես նաև ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն, հասցեն քաղ. Արմավիր Աբովյան 71, հեռախոս. 0237-2-07-70, 2-76-49:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2012 թվականի նոյեմբերի 16: